բաց և միացեալ ընդ գմբեթին և բովանդակ սահեալ ճառագայթէր ի ծայրս ծառոց նոցին և նման աղեղանց, որ յամպս երևի, փայլակնաբար ցայտէր ի ստորագրեալ քարատող և աղիւսաշատ պուրակն, ուր կայր դադարեալ Խաչն Քրիստոսի»։

«Դիտացեալ այնուհետև սրբոյ առն, եթէ յայնմ տեղւոջ է դանձն անկապուտ. առնոյր ի ձեռն բրիչ, պարեգօտեալ իբրև զաբրին Աբրահամ, սկսանէր բրել զնկատեալ տեղին իւրով համահաւանեալ արամբն։ Եւ իբրև վայրափոսէր հինգ քիլ կամ թէ աւել ինչ՝ յանկարծակի երևէր տապան մի արծաթի ժանդաւագոյն հնացեալ, որ ունէր առ հասարակ Հայ, Հոռոմ և Ասորի գիր և ցուցանէր ի նմա գոլ զմասն կենդանարմատ Փայտին, և կայր անդ նշանն Քրիստոսի արծաթաձոյլ գեղազանեալ ոսկի աղօտ տեսակաւ, որ յաւէտ է ի Խաչէն Քրիստոսի»։

«Ապա այնուհետև հրճուալից եղև յոլովակի խնկարկութեամբ այրն Աստուծոյ և զուարթանայր հոգեծաղիկ պայծառութեամբ, և յարակից լեալ մարմնաքնար Դաւթի երգոյն, յօրինէր նուագս երաժշտականս «Օրհնեցից զՏէր յամենայն ժամ»։ Եւ որ ի կարգին է՝ վասն շնորհելոյ երկիւղածաց իւրոց զնշանն, որ միշտ ապրեցուցանէ ի թշնամւոյն։ Եւ զանխլաբար ընկալեալ զայն նշան փրկութեան՝ յիւրն բերէ յեկեղեցի»։

«Յաւուրսն այնոսիկ յերևիլ նշանին և ի զալ հասանիլ ի հանգստարանն՝ մեծ և հրաշալի զարմացումն լինէր, զի լուել անհնարին էր զահեղ մեծ փառացն Աստուծոյ»։

«Զի որպէս Կիւրեղ, որ յԵրուսաղէմ էր Հայրապետ՝ գրութեամբ առ Կոստանդիանոս վասն երևման Խաչին ասէր, թէ ցայտք լուսոյ մինչև ի Զիթաստանեայց լեառնն ոչ միում կամ երկրորդում երևեալ, այլ ամենայն բազմութեան քաղաքին ակն յայտնի ցուցեալ երևէր. նոյն զունակ եղև արևելից աշխարհիս լուսոյ Խաչիս երևումն։ Զի հարթ հասարակ ամենեքին տեսանէին զսաստկութիւն լուսոյն բոցաճաճանչ փայլմամբ եկեալ ընդ ամպս երկնից՝ սլացեալ յայտ յանդիման ամենեցուն ել և էջք շնորհացն ի վերայ ամենասուրբ Խաչին, երբեմն ի նմանութիւն հրոյ, երբեմն ի նմանութիւն լուսոյ, և երբեմն ի նմանութիւն աստեղն, որ ծագէ յառաւօտուն, զոր ոչ մեք, այլ աշխարհ ամե-